


Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2014 թվականին (տարեկան վերլուծություն)


Անշարժ գույքի շուկայի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 2000 թվականից անշարժ գույքի քաղաքացիական շրջանառության գործընթացի ակտիվացման վրա շարունակում են էական ազդեցություն ունենալ հանրապետությունում.

- քաղաքաշինական և ներդրումային ծրագրերի իրականացումը,
- օրենսդրական դաշտի կատարելագործումը,
- գործարքների իրականացման ծառայությունների ժամկետների կրճատումը, գործավարության և գրանցման փաստաթղթերի պարզեցումը,
- ՀՀ հողային օրենսգրքից բխող նորմատիվ իրավական ակտերի ընդունումը,
- ինքնակամ կառույցների օրինականացումը,
- անշարժ գույքի շուկայի մասնակիցներից՝ ռիելթորների, անշարժ գույքի գնահատողների, տեղագրական քարտեզագրման և հողաշինարարական աշխատանքներ իրականացնողների լիցենզավորման գործընթացի իրականացումը: 2000-2014 թվականների կտրվածքով, հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխություններն ունեն հետևյալ տեսքը.




2014 թվականին հանրապետության անշարժ գույքի շուկայում արձանագրվել է գործարքների քանակական աճ, որի արդյունքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը՝ 214168 միավոր, 2013 թվականի համեմատ աճել է 12.3 %-ով կամ 23478 միավորով, այդ թվում Երևանում՝ 5.5 %-ով կամ 3788 միավորով, իսկ մարզերում՝ 16.1 %-ով կամ 19690 միավորով:

2013-2014 թվականներին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժընթացներն ու միտումներն ունեն հետևյալ տեսքը.




2014 թվականի ընթացքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ընդհանուր քանակի 26.1 %-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Գործարքների ընդհանուր քանակի 33.7 %-ը գրանցվել է Երևան քաղաքում: Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում մեծ տեսակարար կշիռ ունեն օտարման գործարքները՝ 24.4%:

2014 թվականին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2014 թվականին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2014 թվականին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 52277 օտարման գործարքների 75.0 %-ը կազմել է առուվաճառքը, 24.5 %-ը՝ նվիրատվությունը և 0.5 %-ը՝ փոխանակությունը: Անշարժ գույքի օտարման գործարքների 40.8 %-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 38.8 %-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2014 թվականին անշարժ գույքի օտարման գործարքների քանակը, 2013 թվականի համեմատ, աճել է 7.3 %-ով:

2014 թվականին Երևան քաղաքում անշարժ գույքի 15911 առուվաճառքի գործարքի 63.2 %-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2013 թվականի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 13.3 %-ով:

2014 թվականին Երևան քաղաքի վարչական շրջաններում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)	
	2013թ	2014թ
Կենտրոն	427000	428000
Արաբկիր	355100	356600
Քանաքեռ-Զեյթուն	281900	282700
Նոր Նորք	249800	252500
Ավան	258400	260200
Էրեբունի	248100	250800
Շենգավիթ	253900	256300
Դավթաշեն	273500	275200
Աջափնյակ	246600	249500
Մալաթիա-Սեբաստիա	239500	242200
Նուբարաշեն	150900	155600
Միջինը Երևանում	271300	273600

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2014 թվականին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2013 թվականի համեմատ աճել են 0.8 %-ով:

2014 թվականին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 4636 բնակարաններ, որոնց քանակը, 2013 թվականի համեմատ աճել է 0.5 %-ով:

2014 թվականին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առավաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)	
		2013թ	2014թ
Արագածոտն	Աշտարակ	114700	115800
	Ապարան	56200	57500
	Թալին	64000	65700
Արարատ	Արտաշատ	94800	96350
	Մասիս	114400	115400
	Վեդի	99400	100500
	Արարատ	75100	75400
Արմավիր	Վաղարշապատ	154000	154150
	Արմավիր	120900	121200
	Մեծամոր	87300	87500
Գեղարքունիք	Սևան	99100	99200
	Գավառ	59200	59800
	Մարտունի	107600	107700
	Վարդենիս	44000	44800
	Ճամբարակ	27800	28700
Լոռի	Վանաձոր	88200	88400
	Ստեփանավան	74500	74500
	Սպիտակ	99800	99800
	Ալավերդի	54900	55000
	Տաշիր	46500	47300
	Թումանյան	11000	11000
	Շամլուղ	8000	8000
	Ախթալա	20000	20200
Կոտայք	Աբովյան	154600	155100
	Նոր Հաճն	128500	128600
	Բյուրեղավան	108000	108150
	Եղվարդ	109300	109400
	Հրազդան	63600	63800
	Ծաղկաձոր	292500	292500
	Չարենցավան	85300	85500
Շիրակ	Գյումրի	109300	109300
	Արթիկ	66400	66700
	Մարալիկ	40300	40700
Սյունիք	Գորիս	120600	122200
	Կապան	91800	92700
	Սիսիան	90700	91200
	Մեղրի	79500	80900
	Ագարակ	46000	46900

	Քաջարան	94500	94700
	Դաստակերտ	8000	8000
Վայոց ձոր	Վայք	94400	95000
	Եղեգնաձոր	123100	125400
	Զերմուկ	111800	112800
Տավուշ	Դիլիջան	112200	113300
	Իջևան	117900	118300
	Բերդ	59600	60200
	Նոյեմբերյան	48800	49900
	Այրում	31100	31850

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, 2014 թվականին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2013 թվականի համեմատ աճել են 0.7%-ով:

2014 թվականին հանրապետությունում արձանագրվել է անհատական բնակելի տների 5288 առուվաճառքի գործարք, այդ թվում Երևան քաղաքում՝ 1453, մարզերում՝ 3835: 2013 թվականի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքի քանակն աճել է 4.7 %-ով, ընդ որում, Երևան քաղաքում՝ 6.7 %-ով, իսկ մարզերում՝ 3.9 %-ով :

2014 թվականին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 մ² և տնամերձի 400.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ² մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը.

Վարչական շրջաններ	Միջին գները(դրամ)	
	2013թ	2014թ
Կենտրոն	475300	476100
Արաբկիր	382200	383000
Քանաքեռ-Զեյթուն	294300	295000
Նորք Մարաշ	318400	319200
Ավան	270000	270500
Էրեբունի	238900	239667
Շենգավիթ	254400	255000
Դավթաշեն	275300	276000
Աջափնյակ	249200	250050
Մալաթիա-Սեբաստիա	237400	238000
Նուբարաշեն	150000	150700
Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)	285900	286700

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2014 թվականին անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2013 թվականի համեմատ, աճել են 0.3 %-ով:

2014 թվականին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 մ² և տնամերձի 1000.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների

վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ² մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)	
		2013թ	2014թ
Արագածոտն	Աշտարակ	136100	136200
	Ապարան	59800	60050
	Թալին	69100	69250
Արարատ	Արտաշատ	99800	100000
	Մասիս	114900	115100
	Վեդի	102100	102300
Արմավիր	Արարատ	88000	88000
	Վաղարշապատ	153000	153100
Գեղարքունիք	Արմավիր	106900	107000
	Սևան	94700	94800
	Գավառ	57100	57100
	Մարտունի	95800	96100
	Վարդենիս	40600	41000
Լոռի	Ճամբարակ	30800	31100
	Վանաձոր	99900	100000
	Ստեփանավան	89800	90000
	Սպիտակ	113900	114000
	Ալավերդի	49700	50200
	Տաշիր	51900	51900
	Թումանյան	12000	12000
	Շամլուղ	13900	14000
Կոտայք	Ախթալա	29900	30000
	Աբովյան	156400	157000
	Նոր Հաճն	129800	129800
	Բյուրեղավան	120400	120500
	Եղվարդ	116100	116100
	Հրազդան	82500	82600
	Ծաղկաձոր	305000	305000
Շիրակ	Զարենցավան	82900	83000
	Գյումրի	118400	118500
	Արթիկ	63100	63100
Սյունիք	Մարալիկ	52000	52000
	Գորիս	129900	130000
	Կապան	99800	100000
	Սիսիան	95900	96500
	Մեղրի	84200	84500
	Ագարակ	46900	46900
Վայոց ձոր	Դաստակերտ	11600	11610
	Վայք	89800	90050
	Եղեգնաձոր	116600	116600
Տավուշ	Զերմուկ	130900	131300
	Դիլիջան	112500	113000
	Իջևան	122900	123200
	Բերդ	59800	60100
	Նոյեմբերյան	47800	48300
	Այրում	35800	36250

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2014 թվականին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գինը (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2013 թվականի համեմատ, աճել է 0.2 %-ով:

Ընդհանուր առմամբ, 2014 թվականին հանրապետությունում օտարվել է 17193 միավոր /8744.05 հա/ հող, որից Երևանում՝ 1566 միավոր /219.00 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 9364 միավոր /6919.76 հա/, որից Երևանում՝ 84 միավոր (20.39 հա),
- բնակելի կառուցապատման հող՝ 5130 միավոր (470.19 հա), որից Երևանում՝ 758 միավոր (68.72 հա),
- հասարակական կառուցապատման հող՝ 1869 միավոր (209.13 հա), որից Երևանում՝ 666 միավոր (121.64 հա),
- արդյունաբերական օբյեկտների հող՝ 221 միավոր (80.98 հա), որից Երևանում՝ 58 միավոր (8.25 հա),
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հող՝ 67 միավոր (84.83 հա),
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 538 միավոր (969.98 հա),
- ջրային հող՝ 3 միավոր (8.18 հա),
- անտառային հող՝ 1 միավոր (1.00 հա) ընդհանուր մակերեսով:

2014 թվականին հանրապետությունում օտարված հողերից 14186 միավորի (7668.41 հա) նկատմամբ իրականացվել է առուվաճառքի գործարք, որից Երևանում՝ 1321 միավոր (193.39 հա), նվիրատվության գործարք՝ 2931 միավոր (1049.29 հա), որից Երևանում՝ 226 միավոր (22.50 հա) և փոխանակության գործարք՝ 76 միավոր (26.35 հա), որից Երևանում՝ 19 միավոր (3.11 հա):

Հանրապետությունում 2014 թվականին հողերի առուվաճառքի գործարքների քանակը, 2013 թվականի համեմատ, աճել է 10.3 %-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակն աճել է 15.5 %-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 1.8 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ աճել 23.5 %-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 1459.64 հա, որից 1384.94 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 24.0%-ը կամ 3411 գործարք (1087.05 հա) հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 519 միավոր (18.91 հա), իսկ 75.1 %-ը կամ 10647 միավորը (5612.07 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող, որից Երևանում՝ 790 միավոր (173.63 հա): 2014 թվականին հանրապետությունում արձանագրվել է վարձակալության իրավունքի վաճառքի 128 գործարք (969.29 հա), այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2014 թվականին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային, անտառային հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ (տնամերձ) հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ (տնամերձ) հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը (հա)	Միավոր	Մակերեսը (հա)	Միավոր	Մակերեսը (հա)	Միավոր	Մակերեսը (հա)	Միավոր	Մակերեսը (հա)	Միավոր	Մակերեսը (հա)	Միավոր	Մակերեսը (հա)	Միավոր	Մակերեսը (հա)
Երևան	0	0.00	30	1.83	205	6.27	284	10.81	60	16.29	25	6.11	408	50.54	297	100.69
Արագածոտն	118	122.39	5	0.38	17	1.76	55	4.20	649	525.16	0	0.00	269	29.75	28	1.32
Արարատ	113	243.58	10	20.09	198	9.29	72	2.34	1074	463.19	13	9.74	522	46.02	47	0.95
Արմավիր	63	50.05	6	3.40	22	1.49	36	1.29	1168	1334.90	4	0.24	576	58.71	34	1.78
Գեղարքունիք	31	42.39	14	11.66	87	6.09	123	7.47	261	214.97	5	0.34	185	23.73	14	2.15
Լոռի	24	11.29	9	4.93	92	2.70	91	5.97	1511	1094.90	7	1.97	108	10.52	24	0.58
Կոտայք	216	277.56	11	1.30	283	17.54	155	4.78	976	603.84	8	2.47	713	65.05	118	13.00
Շիրակ	7	6.29	6	1.48	56	0.74	22	0.97	439	487.73	5	1.87	142	17.99	29	1.28
Սյունիք	30	64.64	17	5.06	15	1.06	20	3.16	248	202.68	3	1.11	56	5.05	17	1.07
Վայոց ձոր	79	65.14	3	1.68	18	1.19	18	0.88	150	59.01	1	0.01	48	5.36	18	1.80
Տավուշ	41	18.32	12	1.45	80	5.35	87	6.38	206	61.51	10	2.54	93	10.74	41	13.13
Ընդամենը	722	901.65	123	53.26	1073	53.48	963	48.25	6742	5064.18	81	26.40	3120	323.46	667	137.75

Ստորև ներկայացվում է 2014 թվականին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների և հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը.

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Գյուղ. նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ (տնամերձ) հողերի		հասարակական կառուցապատ. հողերի								բնակելի կառուցապատ (տնամերձ) հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	356	9.29	28	0.88	164	3.52	164	4.89	163	9.62	0	0.00	2	0.95	41	2.75	120	5.92
Արագածոտն	6	0.26	0	0.00	1	0.05	5	0.21	173	110.97	102	104.89	5	0.38	16	1.71	50	3.99
Արարատ	12	1.06	1	1.00	1	0.01	10	0.05	376	272.96	108	242.30	9	19.09	197	9.28	62	2.29
Արմավիր	18	0.51	0	0.00	5	0.10	13	0.41	107	53.90	61	48.23	6	3.40	17	1.39	23	0.88
Գեղարքունիք	21	6.24	3	5.13	8	0.54	10	0.57	228	51.38	25	32.40	11	6.53	79	5.55	113	6.90
Լոռի	50	0.71	0	0.00	22	0.32	28	0.39	165	23.89	23	11.01	9	4.93	70	2.38	63	5.57
Կոտայք	24	1.68	0	0.00	19	1.28	5	0.40	632	294.59	207	272.67	11	1.30	264	16.25	150	4.37
Շիրակ	24	0.21	0	0.00	21	0.17	3	0.04	66	9.00	6	6.02	6	1.48	35	0.57	19	0.93
Սյունիք	9	0.40	1	0.12	5	0.23	3	0.05	73	73.52	30	64.64	16	4.94	10	0.83	17	3.11
Վայոց ձոր	7	0.23	0	0.00	2	0.03	5	0.20	111	68.66	79	65.14	3	1.68	16	1.16	13	0.68
Տավուշ	25	1.27	5	0.38	10	0.31	10	0.58	192	29.38	38	17.47	7	1.07	70	5.04	77	5.80
Ընդամենը	552	21.86	38	7.51	258	6.56	256	7.79	2286	997.87	679	864.77	85	45.75	815	46.91	707	40.44

Հանրապետությունում 2014 թվականին արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 43 գործարք (36.88 հա ընդհանուր մակերեսով):

Հանրապետությունում 2014 թվականին հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը, 2013 թվականի համեմատ, աճել է 13.7 %-ով: Ընդ որում, Երևանում նվազել է 21.3 %-ով, իսկ մարզերում՝ աճել 17.6 %-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքի քանակն աճել է 29.6 %-ով, բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի նկատմամբ՝ 34.3 %-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել է 12.2 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 28.8 %-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում է 2014 թվականին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մավերեսը (հա)	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակը	Մավերեսը (հա)	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	68	70.67	36.8	2517.5	350.3	425	192.87	365.0	12000.0	3617.9
Ապարան	2	0.55	140.5	2065.9	1103.2	34	23.74	86.5	2727.3	690.1
Թալին	32	33.67	38.2	261.5	131.7	100	123.33	93.6	5494.5	727.4
Ծաղկահովիտ						76	172.46	79.5	1000.0	310.1
Արարատի մարզ										
Արտաշատ	29	79.30	115.8	9841.6	3010.0	520	174.27	335.1	10833.3	2593.2
Մասիս	27	39.94	59.8	4154.9	703.2	176	86.64	200.0	11904.8	2945.7
Վեդի	52	123.05	30.1	12000.0	765.5	360	193.61	207.0	10795.1	1816.8
Արմավիրի մարզ										
Արմավիր	40	26.19	58.3	4207.0	636.6	575	376.61	294.3	9090.0	1218.9
Բաղրամյան	12	13.50	67.5	315.4	152.1	160	592.84	90.6	2561.1	818.8
Վաղարշապատ	9	8.55	63.3	2262.9	856.1	380	256.51	444.4	11764.7	2044.2
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	1	0.67	660.7	660.7	660.7	85	17.12	199.8	1875.0	434.4
Ճամբարակ	4	2.90	862.5	1463.8	1095.9	5	1.45	60.5	953.3	355.2
Մարտունի	5	1.77	128.3	1455.7	525.3	59	16.20	51.1	2850.0	766.3
Սևան	4	3.30	132.0	2166.7	826.2	19	12.62	52.2	2134.8	328.5
Վարդենիս	11	23.76	57.1	418.0	253.5	83	161.11	41.2	2575.1	407.8
Լոռու մարզ										
Ալավերդի	6	1.16	456.5	2480.0	1173.4	73	31.76	170.4	6424.2	588.1
Գուգարք	8	2.00	186.7	1154.8	606.3	257	93.36	234.6	6065.9	806.2
Սպիտակ	4	1.91	383.2	2553.0	1007.3	45	15.45	250.0	5555.5	714.0
Ստեփանավան	3	1.62	409.6	1159.8	758.5	89	65.37	90.6	1686.6	348.4
Տաշիր	2	4.32	452.8	805.2	629.0	1036	879.12	45.3	1384.4	178.2
Կոտայքի մարզ										
Աբովյան	70	78.71	63.9	14736.8	901.3	433	182.21	279.3	11942.7	4029.1
Եղվարդ	103	151.62	72.3	9750.0	1192.8	394	337.39	174.4	11971.8	2411.3
Հրազդան	34	42.34	91.5	1980.0	533.1	119	71.94	130.5	10256.4	1336.0
Շիրակի մարզ										
Ախուրյան	3	1.47	293.8	1724.8	1009.6	163	138.58	252.0	1693.1	629.8
Ամասիա	2	3.56	132.0	187.0	159.5	23	73.37	40.9	261.0	128.9
Անի	1	1.00	105.0	105.0	105.0	153	190.58	110.6	546.9	420.4

Աշոցք						24	23.55	58.5	215.8	133.9
Արթիկ						71	52.63	79.4	1428.6	457.9
Սյունիքի մարզ										
Գորիս	4	1.83	131.4	1884.6	489.7	37	35.52	92.6	1023.2	749.6
Կապան	12	8.25	76.9	1298.8	579.3	33	11.37	120.0	841.6	380.5
Մեղրի	12	51.59	53.0	616.0	150.5	20	6.30	193.0	3000.0	747.0
Սիսիան	2	2.96	136.6	150.0	143.3	154	144.74	46.3	1977.4	558.1
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր	52	33.71	21.7	1500.0	280.4	80	40.10	125.0	10000.0	1903.0
Վայք	27	31.43	41.3	8506.3	1795.9	66	17.91	58.8	1430.7	643.1
Տավուշի մարզ										
Բերդ						79	18.71	213.3	3783.8	694.2
Իջևան	26	11.07	153.5	3300.0	1345.3	64	19.98	267.5	9454.5	1293.0
Նոյեմբերյան	12	6.40	133.4	2301.2	1018.1	63	22.82	46.7	7368.4	940.5

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծ լինելը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում է 2014 թվականին բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 մ² մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (տախտիկի շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը (մ ²)	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակը	Մակերեսը (մ ²)	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Ստավելագույն	Միջին			Նվազագույն	Ստավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	10	5556.1	112.7	6150.0	3086.6	211	207575.1	130.7	22200.0	2583.6
Ապարան	1	317.0	563.1	563.1	563.1	29	34254.0	124.1	609.6	390.6
Թալին	5	11199.0	51.6	712.8	129.4	18	30068.0	63.2	1454.8	152.4
Ծաղկահովիտ						6	20403.0	60.0	214.3	92.8
Արարատի մարզ										
Արտաշատ	23	25665.1	166.9	3833.3	817.2	148	150363.3	173.9	7140.3	903.3
Մասիս	154	55272.0	149.5	7860.0	2949.0	253	184232.2	187.5	25000.0	1220.1
Վեդի	20	11901.5	97.2	2941.2	1075.6	113	117390.4	126.1	5000.0	663.8
Արմավիրի մարզ										
Արմավիր	6	5800.8	359.7	3822.0	1498.9	199	222440.7	131.6	9090.9	1214.8
Բաղրամյան	4	3987.0	233.1	233.5	233.3	20	26098.6	100.0	833.3	240.0
Վաղարշապատ	7	4160.7	95.9	2047.5	749.1	339	316397.0	197.4	26528.4	1531.6
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	16	16505.9	110.0	193.1	148.8	40	46412.7	186.6	1084.3	684.1
Ճամբարակ	4	2737.8	84.5	373.3	239.8	6	2217.0	71.3	2286.2	148.1
Մարտունի	30	22251.2	112.6	666.7	243.0	96	114176.1	119.3	5000.0	287.0
Սևան	6	2903.7	372.6	1210.9	615.9	16	20282.4	240.0	3110.4	326.3
Վարդենիս	23	11066.4	49.5	770.0	288.7	23	46226.4	72.5	987.2	150.1
Լոռու մարզ										
Ալավերդի	25	12672.8	234.1	1800.0	1390.9	20	23401.2	114.3	1388.9	217.3
Գուգարք	33	6091.2	210.0	5204.7	1986.4	47	32231.0	77.9	14083.3	1262.2
Սպիտակ	8	4251.3	151.9	1029.1	559.1	20	27498.5	104.9	1348.3	207.2
Ստեփանավան	1	651.8	253.2	253.2	253.2	16	16147.9	88.2	1666.7	175.6
Տաշիր	3	135.4	351.5	360.7	355.0	4	4669.7	45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	218	129797.8	310.0	6297.3	2987.1	362	282090.6	264.5	35353.5	2026.9
Եղվարդ	43	30158.4	534.6	4599.0	2666.9	301	314210.9	173.6	27000.0	2875.1
Հրազդան	3	2585.0	817.7	2105.4	1450.5	44	49027.0	117.7	34848.5	1321.6

Շիրակի մարզ										
Ախուրյան	26	5050.4	574.3	7692.3	4132.6	68	76155.2	113.6	18750.0	335.5
Ամասիա						2	4683.3	45.3	274.7	71.5
Անի	4	135.0	582.2	655.0	615.4	17	33954.3	67.9	180.6	184.6
Աշոցք						2	8780.0	40.8	144.0	64.9
Արթիկ	5	481.2	160.0	4333.3	1160.6	50	55129.1	111.8	5000.0	218.2
Սյունիքի մարզ										
Գորիս	2	1112.6	298.9	425.3	362.1	15	16000.0	112.2	1700.0	368.5
Կապան	6	6777.7	103.7	1690.1	635.5	17	8729.9	67.9	2638.9	321.7
Մեղրի	1	175.4	107.2	107.2	107.2	14	8757.0	68.5	632.9	227.4
Սիսիան	1	235.0	660.0	660.0	660.0	10	16989.0	123.5	875.0	223.6
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր	9	7117.7	158.4	396.4	267.1	42	47501.6	96.7	7659.6	509.9
Վայք	7	4487.8	850.5	860.0	853.6	6	6075.5	120.7	1448.3	238.9
Տավուշի մարզ										
Բերդ	1	135.5	1107.0	1107.0	1107.0	6	5804.4	75.8	810.0	122.0
Իջևան	59	47001.2	73.2	3000.0	1984.1	73	86692.9	74.1	14423.1	540.7
Նոյեմբերյան	10	3268.5	159.4	5510.2	1561.4	12	13269.0	125.0	1948.1	233.5

2014 թվականին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 8255 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 3.9 %: Ընդ որում, վարձակալության գործարքների 75.1 %-ն իրականացվել է իրավաբանական անձանց կողմից: 2014 թվականին անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը, 2013 թվականի համեմատ, նվազել է 3.4 %-ով:

2014 թվականին հանրապետությունում գրանցվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 574 բնակարանների, 975 անհատական բնակելի տների, 3538 հասարակական նշանակության, 830 արտադրական նշանակության օբյեկտների, 2192 հողերի, 139 ավտոտնակների և 7 այգետնակների վարձակալության գործարք: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2014 թվականին Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 69 վարձակալության գործարքների քանակը 2013 թվականի համեմատ նվազել է 57.9 %-ով:

2014 թվականին հանրապետությունում վարձակալված 7216.54 հա հողերից 40.63 հա վարձակալվել է Երևանում: Մարզերում վարձակալված 7175.91 հա հողերից 4863.06 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 1537.05 հա արդյունաբերական օբյեկտների, 124.14 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Սյունիքի մարզում՝ 2735.47 հա, որից 968.90 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2014 թվականին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 25257 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 11.8 %-ը: 2014 թվականին գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2013 թվականի համեմատ, աճել է 5.0 %-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների (52.3 %), առանձնատների (24.4), հասարակական նշանակության օբյեկտների (10.7 %) և հողերի (7.3 %) նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 14114 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2013 թվականի համեմատ, աճել է 7.0 %-ով:

2014 թվականին հանրապետությունում գրավադրվել է 2636.66 հա մակերեսով հող, որից 112.00 հա Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 87.8 %-ը կամ 2314.44 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից Երևանում՝ 2.09 հա: Առավել մեծ մակերեսով հողեր գրավադրվել են Արմավիրի մարզում՝ 780.58 հա, որից 764.85 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

2014 թվականին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 1902 գործարքներ, որից 1266-ը՝ Երևանում: Ընդ որում, հիփոթեքային գրավադրման գործարքներից 80.2 %-ն իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 13.7 %-ն՝ անհատական բնակելի տների, 2.6 %-ը՝ հասարակական նշանակության օբյեկտների, 0.4 %-ական՝ արտադրական նշանակության օբյեկտների և ամառանոցների, 0.2 %-ն՝ ավտոտնակների և 2.5 %-ը՝ հողերի, այդ թվում 0.9 %-ը՝ գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ: 2013 թվականի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 0.4 %-ով, ընդ որում Երևան քաղաքում՝ նվազել 3.0 %-ով, իսկ մարզերում՝ աճել 7.8 %-ով:

2014 թվականին հանրապետությունում արձանագրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի 22447 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքների, որոնց քանակը 2013 թվականին համեմատ աճել է 3.8 %-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 10.5 %, իսկ քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում (22.5 %):

« Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե